ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ԹՈՐՈՍՅԱՆ Տ. Մ.

1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի ընդունած Հայաստանի անկախության մասին Հռչակագրով հանրապետությունում դրվեց սոցիալիստական արտադրահարաբերություններից ազատ շուկայական հարաբերություններին անցնելու խնդիրը: Առաջնահերթ կարգով ընդունվեց «Սեփականության մասին» ՀՀ օրենքը, որով նաև լուծարվեց հողի նկատմամբ պետության սեփականության մենաշնորհը, և սկիզբ դրվեց սեփականության բազմաձևությանը*: Քաղաքական-սոցիալական բարեփոխումներին համընթաց ընթանում էին տնտեսական բարեփոխումները: Ընդ որում, տնտեսական բարեփոխումներն առավել կտրուկ և շուտափույթ իրականացվեցին գյուղատնտեսության ոլորտում: 1990-ական թվականների ագրարային քաղաքականությունը պետք է գնահատել որպես «անցումային ժամանակաշրջանի» քաղաքականություն, քանզի այդ ընթացքում իրականացվում էր սոցիալիստական արտադրահարաբերությունների ապամոնտաժման և շուկայական հարաբերությունների ձևավորման գերխնդիրը:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի ազդեցություն և ինչ հետևանքներ ունեցան ագրարային բարեփոխումները Կոտայքի մարզի հողօգտագործման վրա: Մինչև 1991-1992 թթ. բարեփոխումները հանրապետությունում հողօգտագործման առաջատարը կոլտնտեսություններն ու, ավելի մեծ չափով, պետական ձեռնարկություններն էին: Կոտայքի մարզում գործում էին բազմաթիվ կոլեկտիվ և պետական գյուղատնտեսական ձեռնարկություններ, որոնց թվաքանակը, ըստ մարզի և տարածաշրջանների (նախկին վարչական շրջանների), բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Կոլեկտիվ և պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների քանակը Կոտայքի մարզում 1990 թ.[1]

Մարզ և տարածաշրջաններ	Կոլտնտեսություններ	Պետական ձեռնարկություններ	Ընդամենը
Կոտայքի մարզ	11	40	51
այդ թվում՝ Նաիրիի	-	14	14
Աբովյանի	5	17	22
Հրազդանի	6	9	15

*Հոդվածը շարադրված է ՀՀ Կոտայքի մարզի օրինակի հիման վրա:

[1] Աղյուսակը կազմվել է ՀԽՍՀ կոլտնտեսությունների ու սովխոզների 1990 թ. ամփոփ հաշվետվությունների տվյալների հիման վրա, որոնք պահվում են գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտի գրադարանում:

Այսպիսով, ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ի տվյալները, 1990 թ. Կոտայքի մարզում գործում էին 51 կոլտնտեսություններ և պետական գյուղատնտեսական ու անտառային տնտեսություններ: Անտառային տնտեսության ձեռնարկությունների զգալի մասը սնանկացած նախկին կոլտնտեսությունները կամ սովխոզներն էին, որոնք իրենց հողօգտագործմամբ ու անասնաբուծությամբ, գյուղտեխնիկայով ու մյուս ստորաբաժանումներով հանձնվել էին անտառային տնտեսությանը:

1991-1992 թթ. իրականացվեցին հողային արմատական բարեփոխումներ, որոնց ընթացքում կոլտնտեսությունների ու պետական ձեռնարկությունների լուծարման հենքի վրա կազմակերպվեցին գյուղացիական ընտանեկան և կոլեկտիվ տնտեսություններ: Ընդ որում, կյանքը ցույց տվեց, որ գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններն այնպես, ինչպես կազմակերպվեցին 1991 թ., հեռանկար չունեին և ինքնալուծարվեցին՝ ասպարեզը թողնելով գյուղացիական ընտանեկան տնտեսություններին, որոնց թիվը, տարեցտարի աճելով, հանգեցրեց դրանց բացարձակ գերակայության:

Հողի և արտադրության մյուս միջոցների մասնավորեցումները հանգեցրին գյուղում մանր բնամթերային տնտեսաձևի հայտնությանը, որն ապրանքային արտադրություն իրականացնելու հնարավորություն չուներ:

Չնայած շրջանառող ենթադրության, թե հողային բարեփոխումներն իրա-կանացվեցին 1991-1992 թթ., աղյուսակ 1-ում բերված տվյալները վկայում են, որ գյուղացիական տնտեսությունների կազմավորման գործընթացները դեռևս շարունակվում են և հանդես են բերում որոշակի ուղղվածություն՝ գյուղացիական տնտեսությունների թվաքանակի ավելացման ուղղությամբ: Ընդ որում, համաձայն աղյուսակ 2-ի, Կոտայքի մարզում գյուղացիական տնտեսությունների թվաքանակի աճն ուղեկցվել է դրանցից յուրաքանչյուրին պատկանող հողատարածությունների ավելացմամբ: Դա վկայում է, որ Կոտայքում տնտեսությունների թվաքանակը աճել է նոր տնտեսությունների ու ավելի շատ նոր հողերի ներգրավման հաշվին:

Աղյուսակ 2

Գյուղացիական տնտեսությունների և դրանց հողօգտագործման շարժընթացը 1992, 1995, 2005 թթ. տարեսկզբի դրությամբ[2]

Մարզ	Տարեթվեր	Գյուղացիական տնտեսությունների քանակը	Մեկ տնտեսությունն ունի (հեկտ.)	
			Ընդամենը օգտագործելի հողեր	Որից՝ վարելահող
Կոտայքի	1992	21816	0,91	0,67
	1995	33360	0,93	0,65
	2005	37611	1,09	0,79

[2] Աղյուսակը կազմվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տեղեկագրերի տվյալների հիման վրա:

Հողային հարաբերությունների և հողօգտագործման կառուցվածքի վերափոխումների հետևանքով մարզում արմատապես փոխվել է հողերի օգտագործման իրավիճակը: Տեղի են ունեցել վարելահողերի և բազմամյա տնկարկների օգտագործման էական փոփոխություններ: Աղյուսակ 3-ում բերված են գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ու դրանց կառուցվածքի շարժը Կոտայքի գյուղացիական տնտեսություններում: Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ 1990 թ. հետո Կոտայքի մարզում ցանքատարածությունները կտրուկ կրճատվել են: 1990 թ. հետ համեմատած՝ 2002-2004 թթ. մարզում ցանքատարածությունները կրճատվել են երկու անգամ: Ընդ որում, Կոտայքում հացահատիկային մշակաբույսերի և մասամբ կարտոֆիլի ցանքերն ավելացել են համապատասխանաբար 3,0 - 3,3 հազար հեկտարով և 500 հեկտարով, իսկ բանջարայինների և ծխախոտի ցանքերի տարածությունները մնացել են գրեթե անփոփոխ: Դրա փոխարեն աղետալի չափերով (12 անգամ) կրճատվել են կերային մշակաբույսերի տարածությունները:

Նշենք նաև, որ մարզում ցանքատարածությունների կրճատումներ տեղի են ունեցել մինչև 2002 թ.: Դրանից հետո նկատվում է ցանքատարածությունների որոշ ընդլայնում՝ հիմնականում հացահատիկային մշակաբույսերի հաշվին: Այսպես, Կոտայքի մարզում 2002-2004 թթ. հացահատիկային մշակաբույսերի ցանքերն ավելացել են 2,1 հազար հեկտա-

Աղյուսակ 3

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների և դրանց կառուցվածքի շարժընթացը[3]

Մշակաբույսեր	Կոտայքի մարզ			
	1990	2002	2003	2004
Ցանքատարածությունները (հազ. հեկտ.)				
Հացահատիկ	11,6	12,8	14,5	14,9
Ծխախոտ	0,1	0,1	0,1	0,1
Կարտոֆիլ	0,5	1,1	1,2	1,0
Բանջարային ընդ.	1,3	1,5	1,4	1,3
Կերային ընդ.	25,2	1,7	2,0	2,0
Ընդամենը	38,7	17,2	19,2	19,3
Կառուցվածքը (%)				
Հացահատիկ	30,0	74,6	75,6	77,2
Ծխախոտ	0,1	0,1	0,1	0,1
Կարտոֆիլ	1,3	6,5	6,4	5,2
Բանջարային	3,4	8,8	7,4	6,7

[3] Տվյալները վերցված են գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտի գրադարանից և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համապատասխան տեղեկագրերից:

Կերային	65,2	10,8	10,5	10,4
Ընդամենը	100	100	100	100

ռով, փոքր-ինչ ավելացել են նաև կերային մշակաբույսերի ցանքերը: Սրա շնորհիվ մարզում ավելացել է ցանքերի ընդհանուր տարածությունը: Կերային մշակաբույսերից մշակվում են հիմնականում բազմամյա խոտեր, ջրովի հողերում՝ առվույտ, իսկ անջրդի հողերում՝ կորնգան:

Այսպիսին է, ընդհանուր գծերով, գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների շարժընթացի պատկերը Կոտայքի մարզում 1990 թ. հետո ընկած ժամանակաշրջանում:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների անհավասարաչափ շարժընթացը հանգեցրել է դրանց հարաբերակցության կամ կառուցվածքի էական փոփոխությունների: Քանի որ ցանքատարածությունների ընդհանուր կրճատումների պարագայում հացահատիկային մշակաբույսերի տարածությունները նկատելիորեն ընդլայնվել են, ցանքատարածությունների կառուցվածքում դա հանգեցրել է հացահատիկայինների տեսակարար կշռի կտրուկ աճի: Այսպես, եթե 1990 թ. հացահատիկային ցանքատարածությունները կազմել են ընդհանուր ցանքերի ընդամենը 30%-ը, ապա 2002-2004 թթ.՝ 75-77%-ը:

Աղյուսակ 3-ի տվյալները նաև վկայում են, որ հացահատիկային ու բանջարային մշակաբույսերի և կարտոֆիլի ցանքատարածությունների աճը տեղի է ունեցել բացառապես կերային մշակաբույսերի շեշտակի կրճատման հաշվին: Վերջիններիս տեսակարար կշիռը 1990 թ. 65,2%-ից իջնելով՝ 2002-2004 թթ. կազմել է համապատասխանաբար 10,0-10,5(կամ նվազել է 5-6 անգամ:

Կերային մշակաբույսերի ցանքատարածությունների շեշտակի կրճատումները հանգեցրել են մարզում անասնաբուծության կերային բազայի արմատական վատթարացմանը: Անասնաբուծությունը մարզի գյուղացիական տնտեսություններում ներկայումս վարվում է ամենաէքստենսիվ եղանակով: Անասուններին գրեթե չի տրվում խտացրած և հյութալի (բացի արոտից) կերեր, իսկ մսուրային շրջանում, որպես կանոն, տրվում են ծղոտ և սահմանափակ քանակությամբ խոտ: Սրան էլ եթե ավելացնենք անասնաբուժական սպասարկման վատթարացումը և տոհմային գործի կազմալուծումը, ապա անասնաբուծության պատկերը կլինի ավելի լրիվ: Այս բոլորի հետևանքով ընկել են անասունների մթերատվությունը և գենոֆոնդի որակական ցուցանիշները:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների 1990-2004 թթ. զարգացումները վկայում են, որ 1991-1992 թթ. բարեփոխումներից հետո, երբ երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը կտրուկ վատթարացավ, և խիստ ընկավ բնակչության պարենապահովվածության մակարդակը, գյուղացու համար առաջնահերթություն դարձավ իր ընտանիքի պարենապահովվածության հիմնախնդիրը: Սրա հետևանքով էլ, մի կողմ թողնելով կերարտադրության գործը, հող ստացած գյուղական բնակչությունն առանց հապաղելու ընդլայնեց առաջին անհրաժեշտության պարենամթերքների՝ հացահատիկի, կարտոֆիլի ու բանջարեղենի արտադրությունը:

Հողօգտագործման և գյուղատնտեսական մշակաբույսերի ընտրության ու տեղադրման վերաբերյալ Կոտայքի գյուղական համայնքներում մեր կատարած ուսումնասիրություններն ու հարցումները հանգեցրին այն եզրակացության, որ գյուղացիական տնտեսությունների մեծամասնությունը, հաշվի առնելով իր ստացած հողակտորների բերրիության ցածր մակարդակը, ոռոգման ջրի սակավությունը, տրանսպորտային բարդացած հանգամանքներն ու հնարավորությունները, մտահոգված է ոչ թե հողերի լրիվ օգտագործման, այլ ընտանիքը պարենով և հնարավոր նվազագույն եկամտով ապահովելու խնդրով: Ելնելով դրանից՝ նրանք ընտրում են ունեցած հողակտորներից առավել հարմարավետներն ու կատարում են այնքան ցանք, որն իրենց հաշվարկներով կբավարարի ընտանիքի պահանջարկը: Նրանց կարծիքով, լրացուցիչ արտադրանքի կազմակերպումն անբարենպաստ՝ անջրդի ու քարքարոտ հողերում անշահավետ է:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում էական տեղաշարժեր ու փոփոխություններ տեղի են ունեցել նաև մարզի խաղողագործության և պտղաբուծության ճյուղերում: Բազմամյա տնկարկների տարածքների շարժընթացի պատկերը ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Բազմամյա տնկարկների տարածքների շարժընթացը[4]

Տնկարկներ	Կոտայքի մարզ			
	1990	2002	2003	2004
Խաղող	1,1	0,5	0,5	0,5
Պտղատու ընդ.	6,9	3,0	3,2	4,1
Որից՝ հնդավոր	4,8	2,4	2,4	2,5
Կորիզավոր	1,9	0,5	0,8	1,3
Ընդամենը	8,0	3,5	3,7	4,6

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, բազմամյա տնկարկների տարածությունները 1990-ական թվականների ընթացքում գրեթե կիսով չափ կրճատվեցին, ինչը վկայում է այդ ժամանակաշրջանում խաղողագործության և պտղաբուծության ճգնաժամի մասին: Սրա հիմնական պատճառը գինեգործության և պահածոների արտադրության շեշտակի կրճատումն էր: Մինչդեռ վերամշակող արդյունաբերության այդ ճյուղերն ավանդականորեն խաղողի և պտղի հիմնական սպառողներն էին:

Աղյուսակ 4-ի տվյալներից պարզորոշ երևում է, որ պտղատու տնկարկների տարածությունը Կոտայքի մարզում 2002 թ. հետո հետևողականորեն ավելացել է: Դժվար չէ նկատել, որ 2002-2004 թթ. բազմամյա տնկարկների տարածքներն ավելացել են շուրջ 1100 հեկտարով, հիմնականում կորիզավոր պտղատեսակների, հատկապես, ծիրանի տնկարկների ընդլայնման շնորհիվ:

[4] Տվյալները վերցված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համապատասխան տեղեկագրերից:

Կոտայքի մարզի գյուղացիական տնտեսությունների հողօգտագործման (մասնավորապես վարելահողերի) ցուցանիշների դիտարկումն ի հայտ է բերում վարելահողերի առկա տարածքի և ցանքատարածությունների միջև էական խզում: Դա, ըստ վերջին տարիների, ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Վարելահողերի օգտագործման աստիճանը[5]

Հազար հեկտար

Մարզը	Ցուցանիշներ	2002թ.	2003թ.	2004թ.
Կոտայք	Ընդամենը վարելահող	30.7	29.7	29.9
	Որից՝ ցանքի տակ	17.2	19.2	19.3
	Չի օգտագործվել	13.5	10.5	10.6
	Դրա տեսակարար կշիռը (%)	44.0	35.4	35.4

Աղյուսակ 5-ի տվյալները հստակ ցուցադրում են մարզում վարելահողերի օգտագործման ցածր մակարդակը: Դա պահանջում է հարցի լրջագույն քննարկում և համապատասխան միջոցառումների կիրառում՝ ամենաբարձր մակարդակով:

Հավանաբար անհրաժեշտ կլինի այս և նման ցուցանիշներ ունեցող մարզերում անցկացնել հողերի գույքագրում և ճշտել հողային հաշվառման ցուցանիշները, վարելահողերի շարքից հանել այն հողակտորները, որոնք դեգրադացվել և վերածվել են անօգտագործելի տարածքների կամ ծառայում են որպես արոտ: Իսկ այն հողակտորները, որոնք հնարավոր է վերադարձնել շրջանառության մեջ, հարկ է մշակել և անհրաժեշտ մելիորատիվ-տեխնիկական միջոցառումներ իրականացնելով՝ տրամադրել գյուղատնտեսությանը:

Ուսումնասիրվող մարզի պարագայում պատկերը հետևյալն է՝ 37.6 հազար գյուղացիական տնտեսությունների տնօրինման տակ կա 29.7 հազար հեկտար վարելահող, որից 2004 թ. ցանքի տակ էր 19.3 հազարը: Սա նշանակում է, որ մեկ գյուղացիական տնտեսության հողապահովվածությունը (վարելահող) կազմում է 0.79, իսկ հողօգտագործումը (ցանքերը)՝ 0.51 հա:

Կոտայքի մարզում 1991-1992 թթ. բարեփոխումներից հետո հողօգտագործման շարժընթացի և ներկա վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի, ինչպես և ամբողջ հանրապետության գյուղական բնակչությունը, ո՛չ տնտեսապես և ո՛չ էլ բարոյահոգեբանորեն պատրաստ չէր վարելու ինքնուրույն տնտեսություն: Դրան գումարվեց հանրապետությունում ընդհանուր տնտեսական և էներգետիկ ճգնաժամը՝ երկրի տնտեսությունը կաթվածահարվեց, առաջացավ պարենային անապահովվածություն և սովի վտանգ:

[5] Տվյալները վերցված են ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համապատասխան տեղեկագրերից:

Ահա այս պայմաններում նաև Կոտայքի մարզում լուծարվեցին նախկին կոլտնտեսություններն ու սովխոզները, և դրանց տնօրինման տակ եղած հողերը սեփականաշնորհվեցին գյուղական բնակչությանը, ձևավորվեցին գյուղացիական տնտեսություններ: Չունենալով ստացված հողերը լրիվ մշակելու ռեսուրսներ և հնարավորություն՝ գյուղացիական տնտեսություն վարողները հրաժարվեցին մանր ու գաճաճ, քարքարոտ ու հողատարված, թեքությունների վրա ընկած հողակտորների մշակությունից և ամբողջ արտադրությունը կենտրոնացրին գյուղամերձ ու համեմատաբար հարմարավետ հողամասերի վրա: Հրաժարվելով տեխնիկական ու կերային մշակաբույսերից՝ ինչպես նշվեց, գյուղացիական տնտեսությունները ձեռնամուխ եղան ընտանիքի համար անհրաժեշտ առաջին անհրաժեշտության պարենային մշակաբույսերի՝ հացահատիկի, կարտոֆիլի ու բանջարեղենի արտադրությանը: Այս գործընթացներին զուգընթաց՝ վերամշակող արդյունաբերության ճգնաժամի հետևանքով խիստ կրճատվեցին նաև խաղողի ու պտղատու այգիների տարածությունները:

Կերարտադրության ծավալների խիստ էական կրճատման և դրսից խտացրած կերերի ներմուծման դադարեցման հետևանքով կտրուկ պակասեց անասունների, հատկապես խոզերի ու թռչունների գլխաքանակը, որի հետևանքով արոտավայրերը զգալի թերբեռնվածությամբ են օգտագործվում:

Այս բոլորի հետևանքով բարեփոխումների առաջին տարիների ընթացքում մարզում էապես կրճատվեցին մշակաբույսերի ընդհանուր ցանքատարածություններն ու բազմամյա տնկարկները: Արմատապես ու բացասականորեն փոփոխվեց մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը: Հացահատիկային մշակաբույսերի տեսակարար կշիռը 28-30-ից հասավ 70-75%-ի, ինչի հետևանքով ընկավ երկրագործության կուլտուրան, ակտիվացան հողատարման գործընթացները, ընկավ հողերի բերրիությունը: Լեռնային արոտավայրերի մեծ տարածություններ կա՛մ չեն օգտագործվում, կա՛մ էլ օգտագործվում են մեծ թերբեռնվածությամբ: Այս իրավիճակը շարունակվեց մոտավորապես մինչև 1997-2000 թթ., երբ նշմարվեցին կայունացման որոշակի միտումներ, որից հետո հողօգտագործման վիճակն աստիճանաբար, դանդաղ, բայց և հետեվողականորեն բարելավվեց: Սկսեցին ընդարձակվել ցանքատարածությունները և ավելի շատ՝ այգիները: Դրական տեղաշարժեր տեղի ունեցան նաև անասնաբուծության ոլորտում: Նկատվեց անասունների գլխաքանակի և մթերատվության աճ, ինչը հանգեցրեց անասնաբուծական մթերքների արտադրության աճին:

Կոտայքի մարզում, շնորհիվ Երևանին մոտիկ լինելուն, մի քանի արդյունաբերական խոշոր հանգույցների ու քաղաքների, ինչպես նաև հանգստի ու հովեկային գոտիների առկայությանը, հաջողությամբ զարգանում է համեմատաբար խոշոր ագրոբիզնեսը: Արդյունավետ գործում են մի շարք խոշոր մասնատիրական անասնաբուծական ձեռնարկություններ, կաթի ու մսի վերամշակման արտադրամասեր ու խոշոր ձեռնարկություններ: Նշմարվում են արդյունաբերական պտղաբուծության զարգացման միտումներ: Այս բոլորը հույս է ներշնչում, որ ուսումնասիրվող մարզում, ինչպես նաև ընդհանուր առմամբ, հանրա-

պետությունում կան հողօգտագործման բարելավման զգալի հնարավորություններ:

ЗЕМЕЛЬНЫХ РЕФОРМ И ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ЗЕМЛЕПОЛЬЗОВАНИЯ

ТОРОСЯН Т. М.

Резюме

После того, как в 1990 году по постановлению Верховного Совета Армении был принят указ о независимости республики, был выдвинут вопрос о переходе от социалистических производственных отношений к свободным рыночным отношениям. В первую очередь был принят закон о “Собственности”, согласно которому земля, принадлежащая государству, была приватизирована и стала собственностью крестьян.

В 1990-1992 годах произошли земельные реформы, в результате которых на базе ликвидированных колхозов и совхозов сформировались крестьянские и коллективные хозяйства.

Приватизация земли и прочих средств производства привела к созданию мелких и натуральных хозяйств, которые не имели возможности товарного производства.

В результате земельных реформ и изменений структуры ведения землеводства в Котайкском марзе имели место существенные изменения в землепользовании. В марзе заметно изменилось производственное использование пахотных земель и многолетних насаждений, резко сократились территории посевных площадей. Увеличились посевные площади зерновых культур и частично картофеля, соответственно на 3.0 – 3.3 тысяч гектаров и 500 гектаров, а территории овощных посевов и табака остались почти без изменений. Из-за кризиса перерабатывающей промышленности резко сократились территории виноградных и фруктовых садов.